

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ռ. ԱՃԵՄՅԱՆ

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն
ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

I ԿՈՆՑԵՆՏՐ
ԳՐԱԿԱՆ.

9(2)
2-50

81

22 JUN 2005

U.W. 9 (~)
U-50

I

ԹԵՐԱՎԱԾԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՎԱԿԱՆ ԱԿՆԱՌԿ

XVIII դարի վերջերում և XIX դարի սկզբներում, արևմըտական Յեփրոպան ապրում եր հեղափոխական խոշոր ցնցումների ժամանակաշրջան։ Ֆիոդալական հասարակարգի խարիսխած հիմքի փլուղումն անխուսափելի խնդիր եր դարձել։ Հասարակական ավելի կենսունակ ուժեր եյին հանդես գալիս, տոն տալու մարդկային պատմության հետագա զարգացմանը։

Ֆիոդալական հասարակության ծոցում հասունացող արդյունաբերական կապիտալիզմի աճումը, վտանգի յեր յենթակա: Ավատական կարգերը, ողակում ու կաշկանդում եյին արդյունաբերության և առևտորի աղատ յեվ անսայթաք զարգացմանը: Անհամար եր տապալել հին ֆիոդալական իրավակարդը, ստեղծելով հասարակական նոր հարաբերություններ, նպաստելու յերկրի արտադրության ուժեղի առւրու զարգացման:

Արդյունաբերական հեղաշրջումը Անգլիայում, Փրանսիական
մեծ հեղափոխությունը XVIII դարի վերջում, սրանք պատմական
այս խոշորագույն սոցիալ-քաղաքական անցքերն եյին, վորոնց
ուսումնասիրությունը պետք է կազմի ներկա առաջադրու-
թյան առանձքը:

ԱՐԵՎԱՏՅԱՆՔԻ ՊԼԱՆ

Հեշալ ուսումնասիրությունն հաջող ավարտելու և յուրաց-
նելու համար, մենք պետք ե աշխատենք հետևյալ պլանով.—

1. Պարզել թե XVIII դարի վերջում ինչ տնտեսական և քաղաքական փայծական իշխանությունը մասնաւոր ձեռնույթի մեջ մտնելու համար է:

2. Ֆրանսիական մեծ հեղափոխության մասնակցող հիմնական դաշտակարգերը և նրանց փոխհարաբերությունները :

3. Հեղափոխության ընթացքի համառոտ պատմությունը. և նրա հիմնական յերեք ետապները՝ ա—(1789-1792 թ.թ. խոչը բոլորութագիայի, տիրապետության ըրջան, բ—1792-1794 թ.թ. Յակոբինյան դիկտատորիա, գ—1794 թվից մինչև կոնսուլյում բոլորութագիան հանրապետություն) :

ԱՆՁԱՎԱՐԴԵԿԱՐԱԽՈՎԵՐՋԱՆ ԲՆՈԼԵՐՃՆ ու պատմական նշանակությունը:

УЧЕБНИК БИОЛОГИИ

—ССРА
А. Манчуковъ

4931

1

ՔՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԵԱԿԻ

Ֆրանսիայի տեսնասական կյանքը .— Ֆրանսիան ընկած է Յեփրապահի արևմտյան մասում և չըջապատված է՝ Անդիֆայով, Գերմանիայով, Իտալիայով, Իսպանիայով, իսկ արևմտյան կողմից ԱՄԵՐԻԿԱՆ ՊՈՎՈՎԱՆ:

Ֆրանսիան այժմ խոշոր կապիտալիստական-իմպերիալիստական յերկրի և ունի մի շարք խոշոր գաղութներ՝ Ասիայում (Հնդկաչին), Աֆրիկայում (Ալժիր, Թունիս, Մարոկո և այլն)՝ ընդամենը 14,032,200 քառ. կիլ. տարածություն 60,654·00 քնակչությամբ:

Գյուղացիների ծանր վիճակը .—1780-ի ամառ թվականներին այսինքն մեզնից մոտավորապես 150 տարի առաջ, Թբիլիսիան իրենից ներկայացնում էր գյուղանունուսական յերկեր, 26 միլ. ազգաբնակչությամբ, Վորից միայն 2 միլ. ելին քաղաքներում ապրում: Ժողովրդի ճնշող մեծաբանությունը (24 միլ.) զբաղվում էր հողագործությամբ, հողը մշակվում էր յեռագայտային սիստեմով, իսկ մշակման ձևերը շատ հետամնաց ելին: Ճիշտ և ճորտատիրական կարգերը համարյա թե վերացվել ելին Թբիլիսիայում, սակայն գյուղացիությունը տնտեսապես ամրողապես յինթակա յեր կալվածատիրոջ, գյուղացին չեր կարող էր հողը ըստ իր հայեցողության տնօրինել: Հողը ծախելու կամ կտակելու իրավունքը, պատկանում էր կարգածատիրոջը:

Հարկերի լուծք և տասնորդը — Ֆրանսիայում գյուղացիությունն ապրում եր անամելի վատ պայմաններում, իր աղքատիկ յեկամուխ մեծ մասը, վորաչես հարկ, վճարում եր պետությանը բացի այդ աղնվածկան կալվածատերերն եւ նույնակես ապրում երի գյուղացիության հաշվին։ Գյուղացին ամեն մի քայլափոխին պարտավոր եր կալվածատերոջը վճարել պարենով, կամ գյամական հատուցումով։ Բացի հողի համար վճարվող գումարներից գյուղացին պարտավոր եր կալվածտերոջ ջաղացից, կամ ջրի առմիջ ոռտվելու համար, վճարել։

Հոգեւորականությունն ի հարկե անմաս չեր մնում այս ընդհանուր թալանից։ Գյուղացիությունը պարտավոր եր իր յեկամը տի մեկ տասներորդ (տասնորդ) մասը, բաժին հանել հոգեւորականությանը։

Բացի պետության, աղնվականության և հոգևորականության վճարելուց, գյուղացին պարտավոր եք լայն սպառման առարկա-

ների համար ես, անուղղակի հարկ տալ, որինակ՝ աղի համար վորը պետության մենաշնորհն եր: Գյուղացին սպասավոր եր անովայօն, վորոշ քանակությամբ առ գործածել եւ դրս համար իշարկե վճարել:

Գյուղացիների ծանր վիճակը .—Միամբ ուղղակի հարկերի գումարը խլում եր գյուղացու յեկամուտի 2/3-ից ավելին։ Պարզ եր գոր այս բայորից հետո գյուղացին պետք է ապրեց անհասելի վաս պայմաններում և յեթք պիտի վնասներ տիրող կացությանից դուրս դալու համար։ Սրանց ավելացրեք նաև վերջին տարիներում կրկնվող հաճախակի յերաշտները, վոր ուղղակի պատուհաս ելին Ֆրանսիայի համար։ 18-րդ դարի վերջներում զեալազ դյուլացիոն թրան վիճակն ավելի քան անհանելի յեր գտանում, նրանք ապրում ե սննդում ելին ամենավաս պարբաններում։ Մի ժամանակովունի նաև մակում կարգում ենք՝ «Ենք ոյնուղացին ապրում և սոսկալի շքավորության մեջ զատարի խթճիթներում, առանց անկողնու և ուղանի, հաճարի ալյուրն ու վարակը, գյուղացիների այլ միակ կերակուրը, մեծ մասամբ չի հերիքում, ոույժիսկ ½ տարի։ Նրանք սահմանափած են լինում հածարվել կերակրից, կարել այն իրենց յերիսաների ընթացից, վարսեազի կարողանան ոուրք վճարել»։

Ազնվական-կալվածառերեր.—Ազնվականները թագավորի գրի-
խափորությամբ աեր ու անորեն ելին լերկրի բարոր իրավունքնե-
րին՝ պետական վարչական բարձր պաշտօններ վարելու իրավունքը
միայն սրանց եր վերապահվեած։ Հոգեգարականության հետ միասին
աղնվականները կազմում ելին թթվերի արտօնյալ դասեաը, սրանց
հարկ է ելին վճարում և աղբաւմ ելին աշխաղաղեա աշխաղաղեա պարու-
թյան հաշվին։

Ազնվական-կարգվածառերերից շատերը թողնում ենին դրուզի և
բաղաք դալիս թագավորի պարագաներ բարձր պաշտոններ վարելու .
որանք ահազդին ունիկներ ենին ստանում և ամբողջ ժամանակ զբաց
ված ենին խնջույքներով և խրախնաքներով : Թագավորն իր հեր-
թին անինա շռայրամ եր պետական դանճարանի փողերը, պահելով
հաղարավոր պարագաներից բաղկացած շքախումբ, բավական
և առել, զոր թագավորի աղջիկներից մեկը, զոր ընդամենը
մեկ ամսական եր, 80 պայտականներից բաղկացած հաստիք (բշ-
տառ) ուներ :

Հոգեվորականությունը՝ ինչպես սասացինք, հոգեորականությունն իր հերթին, նույնպես ծծում էր չարքաշ ժողովրդի արյունը, Այս «հոգեօր Հայրերը» ունեյին խոչը գանքապատկան կալվածքներ, զարոնց հարաբերությունը 1789 թ. հաշվում էր մոտ 3 մի-

ժիարդ մելք^{*)}): Սրանք նույնակես ապրում են շատ շքեղ, բայց ական և ասել, վոր կարդինալ Դը-Ռուզանինի հագուստը հենց միայն 100.000 լիմ արժեր:

Ի հարկի հասարակության բարձր խավերի, այս շուքն ու բարեկեցությունը, հիմնված է ազգաբնակության ստորին լայն մասների, անլուր շահագործման վրա:

Յերրորդ դաս.—Ֆրանսիայում այդ ժամանակ յերրորդ դաս երկոչում, ազնվականությունից և հոգեռաբականությունից հետո, ազգաբնակության մնացած բոլոր խավերը, այն է՝ պարզցիություն, քաղաքի բնակչության մեծամասնությունը, աբհեսաավորները, առևտրականները, փոքր արդյունաբերողները, սակավաթիվի բանակըները և այլն:

Տուրքուազիա.—Քաղաքներում և նախահանգստային վայրերում, մեծ մասմբ կենտրոնացած եր առևտուրն ու արդյունաքննությունը: Ի հարկե, այն ժամանակ, ներկա իմաստով, խոչոր զորաբանային արդյունաբերություն, գոյություն չուներ, արտադրությունը մեծ մասմբ կատարվում եր արհեստանոցներում և ձեռադրժարաններում, (մասնաւուկանարային տիպի ձեռնարկություններում):

ՖԻՇԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ և ԱՆԳԱՐՈՒՄ ԵՅԻՆ ԱՌԵՎԱՐԻ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՅՄԱՆ:

Սակայն, թե արդյունաբերության և թե առևտուրի դարձացկանության մասնակին լայն մասսաների գնողացածական անկարողությունը: Գյուղացիությունը, վոր պատմական ապրանքների ամենալայն սպառողն եր, ինչպես անսուապէս չափազանց քայլայիքած եր և չեր կորող զնել շուկա-

բացի այդ, արտադրության զարգացման խոչընդուռ եր հանդիքությամբ համարական կանոնները: Այս կամ այն ճյուղի արտագրաբանական բոլոր կանոններին, այն է՝ չեր կարելի վորոշ թվիցավելի պետք և ունենան վորոշ լայնություն և յերկարություն, բարվական և ասել, վոր ներկելու վերաբերյալ համանութը բարկացած եր 317 կայացնում եր նրանց համար յեկամուտի հարաւայ աղյուռը:

*) Լիմ, — ֆրանսիական հին գըտմ և, մինչ պատելապէջան 371/2 կող.

Առեւրոի համար սահմանված ելին ավելի ճնշել միջացներ: Այդ ժամանակ ֆրանսիան բաժանված եր բաղմաթիվ շրջանների, ուր առնեն մի ազնվական-կարվածատեր զերիչսան եր և ուներ հատուկ համատկած մաքսային կանոններ, կառավարության շահերից յեւնելով, արտաքին առևտուրի մաքսային բարդաբանությունը տարածում եր այնպես, վոր ավելի գարգացած յերկրներից (Անգլիա) և առանձնաբները վորողում ելին ֆրանսիայի շուկան և ացղայիսով խոչըր հարված հացնում տեղի առևտուրին և արդյունաբերությանը: Այսուեղից յերեւում և, վոր պետության առևտուրական, հարեւային և արդյունաբերական քաղաքականությունը, բնավ չեր նըմաստում, յերկրի արտադրող ուժերի գարգացմանը, վորից բուրժաւագին, այն դասակարգը, վոր այդ գարգացման հետևանքով ողիսի և անդ գրավիր, գարձավ միավետության ամենավախներից թվանմին:

Մամբ բուրժուազիան և արեւուավորությունը: — Յերրորդ դասուի այս խավը, վորը քանակական տեսակետից առաջնակարգն եր, պատկան շահագործման և հարստահարման յինթակա չեր: Սա արնաքանությունը եր հարկերի և մենաշնորհների բնոի տակ: Գյխավորակես այս գոտի ծոցից, հանդեռ յեկան այնպիսի առաջավոր մատվորականները, վորոնք հեղափոխության մեջ, կատարեցին աչքի ընկնող գեր:

Յանվարությունը: — Գործարանային արդյունաբերության թույլ գարգացած լինելը, ինքնարսինքյան յենթադրել և տալիս, վոր բանվորությունը նոր-նոր եր միայն ձեւակերպվում, վորովես դասակարգ և քանակական տեսակետից խոչըր թիվ չեր կազմում: Բանվորներ զվարարապես կենտրոնացել ելին Փարիզի Սրբարձնությունը և մի քանի մանվածային գործարանների կենարոններում (Լիոն): Գատկանելի թիվ եր ներկայացնում այսպես կոչվոծ «Այտման-պրոլետարիաներ-մուրացկաններ», վորոնք հեղափոխության նախորյակին, հաշվում ելին մոտ 1½ միլիոն: Հասարակության այս սառրին շերտը տառապում եր քաղցի և թանգության ճիշճաններում և ամեն բոլե պատրաստ եր համահատակ անել, սոխող բոնակալական կարգերը:

Յեղքակացություն: — Այսպես ամփոփելով վերև ասածները, մենք կդանք հետեւյալ յեղքակացության: Ֆրանսիան ԽVIII դարի վերջերում, հեղափոխության նախորյակին, անտեսապես հետզդ հետեւ զնում եր, գեպի անկում, շահագործող գասակարգերը՝ աղավականությունն ու հոգեռարկանությունն, անողոք քամում ելին աշխատավոր ժողովրդի, առանց այն ել, սպասմած ուժերը: Յերրորդ զասի աշխատավոր շերտերը, գյուղացիներն ու արհեստավոր-

ները, վարսենք իրենց արյուր քրաբենքով, անուցանում է ելի՛ց
մի խումբ հասարակական աղքուկների, իսկ յիշենք գտրարիում
ելին բանապետության ճերաններում։ Այսպիսի պայ-

ժաններում հեղափոխությանն անխռուսափելի յերնատ ուներ իր սո-

ցիալական խորը արժատուները։ Հին հասարակաբդը պետք է արժա-

տառապետ վերակառուցվիր, բավարարելով բուրժուազիայի և պայ-

զացիության հետեւյալ շահերին։

1. Վերացում հոկայական բավարույն հողամասերի, կուրժ-

ծառերերի սեփականության լինելուց։

2. Հարկերը մհարելու արտոնությանների վերացում և թե-

թեացում։

3. Վերջ բոյոր տեսակի համբյուրսային և մաքսային կանոն-

ներին մերդունաբերության և առեարի լիակատար աղասություն։

4. Արենքի և իրավունքի սուսած, բոյոր զաների համար, հայու-

սար իրավունքի սահմանում։

5. Արենքի և իրավունքի սոսած բոյոր զաների համար, հայու-

սար իրավունքի սահմանում։

6. Յերկրի կառուցումը ժողովրդի ձեռքով։

Այս հիմնական հարցերին լուծում պետք է տար հեղափոխու-

թյունը։ Յերկրի արտադրության ուժերի զարգացման համապա-

տառիսան, պետք է հիմնվեր հասարակական նոր հարաբերություն-

ներ, սույնելով պետական նոր կոսուցվածք։

ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Թվեցեք Ֆրանսիայի տնակառության հատկունչական դժեռը
հեղափոխությունից սոսած։

2. Ինչո՞ւ եր զբաղվում ազգաբնակչության մեծամասնությու-

նը։

3. Ի՞նչ զառակարքեր զոյություն ունեցին հեղափոխի սոսած
Ֆրանսիայում։

4. Ո՞վքեր ելին շահողործում գյուղացիներին և ի՞նչպես եր

անդրադառնում արդ նրանց անտեսության զարգացման վրա։

5. Ֆրանսիայում ի՞նչ հարկեր զոյություն ունեցին ո՞յքեր

ելին վճարում։

6. Ինչո՞ւ յերկրի արդյունաբերությունը և առեարուր վասանդը

յեր յենթակա և վորո՞նք են զբա պատճանեքը։

7. Ո՞վքեր ելին կոչվում արտոնքալ զաներ և ի՞նչ իրավունքներ

ելին վայելում։

8. Ինչո՞ւ հեղափոխությունն անխռուսափելի յեր։

II

ՀԻՄՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Նախարար դիմում մենք պարզեցինք, թե ինչպես Ֆրանսիայում
ուստիթյունը հատվածներ դժվարանում եր։ Համախակի կրկնվող ան-
ուրիբիությունը, ել ավելի դժվարացնում եր գյուղացիների դրու-
թյունը։ Վերջում ֆրանսիան կովի գուրս յեկալ Անդրեացի դեմ,
վորը կրկնապատկեց պետական ծախքըրը։ Կառովարությունը
ներքին և արտաքին փոխառության դիմեց։ Բացի այդ շարժնական
հարկերն ամելացնելով ցանկումում եր պետական բյուջեի դի-
միցիուը ծածկել։

Այս հոդի վրա առաջացող գյուղացիական շարժումներն ու ա-
զգաստիթյունները, սկսեցին համախակի բնաւյթը ստանալ։ Կեն-
սամթերքների դների բարձրացումը և հացի սուր պահանջը, ըս-
կաց զայրութ սոսածացնել, քաղաքային ազգարժնակչության մեջ։
Փարիզում և այլ արդյունաբերական հենարաններում (Լիոն) քաղցած
ուժուիր, հարձակվում և հացի և կենսամթերքների իսա-
հութի վրա, պահանջելով հաց և աշխատանք։ Ֆինանսական ծանր
գրությունն սկսեց մասհոգել թե խոչոր բուրժուազիային և թե
կաղապարին անձամբ։

Գեներալ Շտանինը. — Թագավորը և կառավարությունը, այդ
անհետնելի գրությունից գուրս գալու համար, վորուցին հրավի-
րել վաղուց ի վեր ժուացված և վասած մի հիմնարկության ժողովը,
վորը պետք և բաղկացած լիներ ժողովրդի ներկայացուցիչներից։
Այս ժողովը վերը «Գեներալ Շտանինը» անունն էր կրում, 200 տա-
րուց ավելի յեր չեր հրավիրվել։

Թագավորը ցանկանում էր «Գեներալ Շտանինը» միջոցով մի
փորբ մեղմել յերկրի ծանր անտեսական և քաղաքական դրությու-
նը, նոր հարկեր հասաւառել և միայն այսքան։ Այս ինչ ժողովուրդը
իր ներկայացուցիչների միջոցով, կամենում եր լուծել մի շարք
հարեւորագույն հարցեր, այն և՝ սույնդել պետական նոր կազմ,
հարկացին նոր սրինթների մշակում և այն։ 1789 թ. մայիսի 5-ին
դաշվեց գատարի ժողովը։ Առաջին 2 դասր՝ ազնվականությունը և
Հոգեօրականությունը, վարոնք ունեցին 600 հոգի ներկայացուցիչ,
որին գուրս յեկան բարյու հարցելի միասն քննարկման, իսկ յեր-
րաբդ գատը, վորը նույնին 600 հոգի պատամակոր ուներ, պա-
հանջում եր բարյու հարցերը քվեարկել միացցալ նիստերում։ Հաղթու-
թյունը մնաց յերբարդ գատի կողմ և ու իրեն հայտարարեց ազգա-
յին ժողով։ Առաջին յերկու զաների պատամակորները հւասցան,

իսկ յերբորդ դասը հանգիստավոր յերգում ավեց չէւսանալ, մինչև
Ֆրանսիայի Համար քաղաքական նոր իշարդեր չհաստատուին:

Այս դեպքերը հիսամթափեցին թագավորին և նա միջոցներ Եր
կորոնում, ժողովը բռնի ուժով ցրելու:

Բաստիլիայի առումը:— Փարիզի հեղափոխական ժողովուրցն
անհամբեր սպասում եր հիմնադիր ժողովի վճռական դործողու-
թյուններին: Մովը և որեցոր ածող թանգությունը զայլացնում եր-
առանց այն ել հուզված ամբոխին: Սակայն, յերբ ժողովուրդը լր-
սեց, վոր թագավորը զարքեր և շարժում ֆարիզի վրա և դեմքի ու-
ժով ուզում և ազգային ժողովը ցրել, մյուս կողմից մեծ ժողովը բր-
դականություն վայելով՝ Հեկիերին, պաշտօնից հեռացրել և արդեն
համբերության բաժակը լցվեց բուռն զայրութով լցված հեղափո-
խական մասսաները, դուրս յեկան փողոց, սկսեցին պինդել և հար-
ձակում գործել, կենամթերքների պահեստների և ապա կատա-
ղած ամբոխը, շարժվեց Ֆրանսիայի աժենանմատչելի բանով՝
Բաստիլիայի վրա: Այդ ըերդում բանարկիած ելին բոլոր բաղադրու-
կան բանարկայաները և դա ներկայացնում եր իրենից, չին ուժի-
մի անառիկ ամբոցը: Սակայն հեղափոխական ժողովորդի հղոր ու-
ժի առաջ խորսակլում և ամեն մի ամբություն և 1789 թ. հունի-
սի 14-ին Բաստիլիան ընկալ:

Ազգային ժողովը փրկված եր.— Բաստիլիայի առումը վախեց
ըեց թագավորին և նա իր կամքից անկախ, ընդունեց ազգային ժո-
ղովի գոյությունը: Սակայն ազգային ժողովի պատգամավորները,
ընդապուրել զամերից չեցին ընտրված, նրանց ճնշող մեծամասնու-
թյունը, կազմում եր խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներից
և մանր բուրժուազիայի ավելի չափավոր տարբերից: Այս և որտո-
ւառն այն դերքի, վոր բոնհաց ազգային ժողովիր, հանդեպ հեղափո-
խական մասսաների կրկնվող յերաշխերի, ավելորդ և վտանգա-
վոր համարելով այլպիսին:

Խոշոր բուրժուազիայի իշխանություն և նրա սահմանադրու-
թյունը:— Ազգային ժողովը, վորն ինչպես ասացինք, իրենից ներկու
յացնում եր խոշոր բուրժուազիայի շահերի արտահայտիչ, սկս
կապ առեղծեց թագավորական վընմների հետ և թշնամական դիրք
բռնեց հանդեպ հեղափոխական մասսաների:

Ժողովը մշակեց նոր սահմանադրություն, վորի հիման վրա,
միայն ունեվոր մարդիկ ձայնի իրավունք ստացան. այս-
պիսով ազգարնակչության 2/3-ը զրկվեց քաղաքական կյանքին
մասսակցելուց: Ժողովի անդամներից մեկն ասում եր՝ «Այդ վորին
չունի նա հասարակության անդամ չի, իրավաբարությունը և որինու-

վ ըստ թյունը, ունի ականատերերի դործն ե, քանի վոր միայն նը-
րանք են զբանագի շահագրգությած»: Ազգային դվարդության զինվոր
լինելու իրավունքը, նույնպես վերազահված եր միայն հարուստ
ունի ականատերերին:

Գյուղացիները և բանվորները վոչինչ չառացան եեղափոխու-
րյունից:— Այսպիսով հեղափոխության առաջին որից յերբորդ դա-
սի ունեվոր մասը սերտ կապ հաստատեց ազնվականների և պարա-
տականների հետ: Անցնելով իշխանության վրա ի բուրժուազիան
վոչ մի փոփոխություն չժամցրեց բանվորների և պյուղացիների դր-
բաթյան մեջ:

Գյուղացիները մէծ անհամբերությամբ սպասում եյին, վոր
ազգային ժողովը հիմնականում կիմսուի հողի և հարկերի հարցը
հոգուս իրենց, սակայն ժողովը վոչ մի գործնական քայլ շարեց
այդ ուղղությամբ: Հրատարակից հողային որևէ, վարով դյու-
դացիները կարող եյին հողերը վճարով հետ գնել կալվածառերե-
րեց, սակայն այնպիսի ծանր պայմաններով, վոր ուղղուցին հը-
նարավորություն չուներ այլքան մէծ դումար միանվագ մուծելու:
Իսկ կալվածառերերից խթած հողերը հետ պիտի վերադարձվեյին:
Հարկերի մեծապույն մասը կրկնին ծանրաբեռնված մնաց, զրուց-
ցների և քաղաքի աշխատավորների վրին: Բանվորները նույնական
վոչ մի ուսւած չստացան: Սահմանադրությունը նրանց վոչինչ ըր-
ավեց, իսկ ժողովը հրատարակած նոր որենքների համաձայն ար-
դերիլում եր բանվորներին գործադույլ անել, կազմակերպված կրե-
պով դուրս գալ բաղնքի:

Ազգային ժողովը բուրժուազիայի շահերի պաշտպան:— Բուր-
ժուազիան մասնակից զանալով յերկրի կառավարման գործին, իր
շահերը պաշտպանելու ինդրում, վորոշ վճռականություն հայտնա-
բերեց: Արգեն ասացինք, վար նոր մշակած սահմանադրության հի-
ման վրա, միայն ունեվորներն իրավունք ունեցին ընտրելու: Բացի
այդ, նրանց հաջողվեց վերացնել առաջի յերկու գասերի վայելած
ամեն աեսակի արագությունները, ըստ այդ սահմանադրության՝
որենքի առաջ մարզիկ համար են:

«Մարդու և քաղաքացու իրավունքի դեկլարացիոն»: Վոր կազմում
եր իբրև ներածություն սահմանադրության, այսպես եր բնորո-
շում մարդկանց իրավահավասարության խնդիրը: «Մարդիկ ծըն
վում են ու մնում են ազատ ու համաստ իրավունքներով, հաստ-
րակական առաջնակցությունների հիմքը, կարող ե կազմել միայն հա-
ստրակական սպասարկությունը, որենքները միտեստ ու պետք ե
լինեն, բոլորի համար:»

Նոր սրբնագրությունը լայն հնարավորություն էր՝ ստեղծնի, առևտքի և արդյունաբերության ազատ զարգացմանը։ Վերացվեցին համբարձական բոլոր անսամբլի կանոնները, վարոնք զանգալեցնում ենին արտապլության զարգացումը։

Դատական և որենողբական կարգը վերակառուցման յենթարկվեց, պետական և զատական որդաններում պաշտոնի անդամ բարձությանը սենյոր ժամանությունը։

Ժողովն աչքաթող չարեց հին ֆիոկտիվական կարգերի հարութաշաղան՝ կաթոլիկ հոգևորականությանը։ Վանքերից և յեկեղեցիներից խրիստությունը կալվածքները և կարողությունները, չանձնելով բոլոր պետական և կարողությունները, իսկ կղեւականների համար հշանակից առանձին ռոճիկ։

Հեղափոխությունը դեռ ավարտված չեր— վերի հիւմաններից զարդվեց, վոր բուրժուազիան ձեռք բերեց խոչոր իրավունքներ և լայն հնարավորություններ՝ հաստություն կրամակնելու։ Սակայն դեռևս ժողովրդական լայն զանգվածները, խոշոր սպասելիքներ ունեցին հեղափոխությունից և կարծում ելին, վոր դեռ ևս նու չի մերժացել։ Հացի խնդիրը չեր լուծված, քաղաքի և դաւագի հսկայական մասամները, քաղաքական կյանքին մասնակցելու իրավունքը զուրկ ելին, իսկ թագավորն ու պատասականները, վայելում ելին սպասարկին ժողովի լայն հովանագործթյունը։

Թագավորն ու աղնվականությունը, իրենց կարցրած վաստան ու արտոնությունները վերականգնելու համար, միջացնել չելին խրհարձում, այդ նովաստակով կազմակերպված թագավորի գաղանի ժախուսաը Փարիզից, վորն անհաջողության մասնից, խոչոր շուգում առաջացրեց ժողովրդական լայն ջրաններում։ Երանք ողջանջում ելին աղջային ժողովից, ժամական միջոցներ ձեռք ունեմությունը, նույնիսկ զահնեց անել, իսկ Հարուստ բար ժողովրդային զա ձեռնոտու չեր, թագավորը նրան գենես ժամանակավայր պիտք եր, վորպես հին կարգերի բռունցք, ուղղված չեղափոխական ժողովրդի դժմ, մինչ իր իշխանության ամբացումը։

Դրան որինակ կարող և ծառայել Մարտին զաշտի զնօքականարությունը։ Ժողովրդական մասսանները, թագավորին զահնեց անելու բողոքնով 1792 թվի վերջերին հավաքվեցին Փարիզի մոտակա Մաքսյան զաշտում և պահանջեցին աղջային ժողովից, թագավորին հեռացնել իշխանությունից։ Մականի, արդային զարդարություն, վոր կազմված եր հարուստ ունեմուներից, զնօքականարի սկսեց անդեն ժողովրդին։ Թագմաթիվ մարդիկ սպանվեցին և վի-

րավորվեցին։ Ժողովաւրդը պարտված էր, իսկ բուրժուազիան տանում եր իր հոգեանունը։

Աղդային ժողովը, սահմանադրություն մշտկելոց և յերկրում իրավական ու վարչական նոր ուժիմ հաստատելուց հետո, ցըմեց, նրա տեղ նոր սահմանադրություն հիման վրա, հրավիրվեց որենութիւն ժողով 1792 թվի վերջերին։ Հեղափոխության ժամանակական ժողովը 1789–1792 թ. համարվում և առաջին համար, խոշոր բուրժուազիայի տիարագետության շրջանը։

ԱՏՈՒԳԱՂԱՎԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նապատակով հրավիրվեց «Գններալ Շատանները» և ի՞նչ հույսուր եր կապել գրա հետ յերրորդ դասը։

2. Ի՞նչպես եր արամարդկան թագավորը հանդեղ ազդացին ժողովի և ի՞նչ դիմագրություն ցուց ամեցին մասամները։

3. Ի՞նչպես եր մշակված բուրժուազիայի կողմից սահմանադրությունը և ո՞ւմ շահերն ելին ապահովված։

4. Ի՞նչ սատացն բանվորներն ու դրազգացները նոր մշակած սահմանադրությունից և ինչո՞ւ նրանք դգոս մասցին։

5. Ինչո՞ւ հեղափոխական մասսանները դեռևս հեղափոխությունը վերջացած չելին համարում և ի՞նչ նոր խնդիրներ ելին առաջարկում (թվեցիք այս հողի վրա կառարկող յելույթներն ու նրանց հետեւնդները)։

III

ՅԱԿՈԲԻՆՅԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Նորբնակիր սրբնագիր ժողովը, ըստ իր կազմի, չառ չեր տարրերիւմ նախորդից։ Ինչպես դիտնեք, համաձայն սահմանադրության, միայն ունենար քաղաքացիներն իրավունք ունեցին ընտրելու և բարվելու, այդ հիման վրա որենսուրի ժողովում ընտրված էլին դրեթի բարը անհետ մարզիկ, համեմատարար ավելի քիչ եր աղջայինանության և պարտաւականների թիվը։ Ժողովում չելին համար աղջային աղջային աղջայինան տարբեր։

Յակոբիններ և միքանիներ։ Հեղափոխության այս ժամանակաշրջանում Փարիզն աղջային աղջային քաղաքական յեռուն կանք։ Ամենաուրիշ քննություն ելին աղջային որվա Հրատապ հարցեր, ժողովներ և Համբարձություններ կարանում ելին ակուսքներում, վորոնց թիվն այդ ժամանակ Փարիզում շատ եր, գրանցից հիշողներուն արժանի յի Յակոբինների ակումբներ, վոր աղջային աղջային աղջային կազմում ելին քաղաքի չեավոր և պարտիուրապես մանր

բուրժուազիայի ներկույցուցիչներ՝ իրավաբաններ, պատղեր և
լիդհանրապես մտավորականներ :

Այս ակումբի անդամներն եյին, վորոնք հեղափոխության ըն-
թացքում խոշոր գեր կատարեցին: Յակոբիններն որենազիր ժողո-
վում, ինչպես առաջինը, խոշոր թիվ եյին կազմում և ժողովրդի
մեջ մէծ համականք եյին վայելում: Ժողովի մյուս ազգեցինե
խումբը դիրքութիւններն եյին վերն առևտրապրդունարերոց
ենի կուսակցություն եր և պաշտպանում եր վերջինիս շահերը
կոմպրոմիտ մանելով թաղավորական շրջանների հետ:

Նոր ապստամբություն եր պատրաստվում: — Արենաւելիս ժողովի
երան վախիսություն չմացրեց, յերկրի տնտեսական զրբություն
մէջ, ընդհակառակը, դյուզացիների և քաղաքային չունեոր տարրե-
րի գրությունը, և ավելի վատացավ վերահաս պատերազմի հե-
տևանքով: Ֆրանսիան զատերազմում եր Ավստրիայի և Գերմանո-
կան պետությունների գեմ: Այդ պատերազմը ձեռնուու յեր խոշոր
բուրժուազիային, վորովհետեւ վերջինիս համար զատերազմը խո-
չը յեկամտային աղքայուր եր: Թաղավորը նույնպես կողմնարկից
եր պատերազմին, նա հույս ուներ Ֆրանսիայի պարտությամբ ար-
տաքին հականեղափոխական ուժերի ողնությամբ, վերականգնելու
իր նախկին իրավունքները:

Պատերազմում Ֆրանսիական զոքերին անընդհատ պարտու-
թյուն եյին կրում, չորհիմ անշնորք համաճառապեների և անկաղ-
մակերպ զորքի: Ֆշամբին արդեն անցել եր Փրանսիական ուժեմներ
և սպանում եր մարդաբարքին:

Արենագիր ժողովը վոչ մի վճռական միջոց ձեռք չեր սունում,
զրությունը ուսպանձակառում փոխելու և հեղափոխության նեխ-
նուններն ապահովելու համար, իսկ թաղավորն ամեն կերպ նը-
պատում եր Ֆրանսիայի պարտության և դադանի դավագրու-
թյուններ լարում:

Բարգանձականի անհաջողություններն ել ավելի գրգռում ու
չուզում եյին ժողովրդին: Փայտիզում ապառամբության նախազառ-
րաստության եյին ունենում: Հեղափոխական մասսաները, պահան-
ջում եյին հեռացնել անարժան թաղավորին զահից, (իշխանու-
թյունից) և բոլոր քաղաքացիներին թույլ տալ մասնակցել քաղա-
քական կյանքին:

* Ապստամբությունը տեղի ունեցած 1792 թվի սկսումում 10-ի
զիւքը: Պարիզի բանվորության ու արհեստավորությունը, զիւ-
քած ուժերով հարձակվեցին թաղավորական պարագ վրա, յեր-
ետր գիմադրությունից և 5000 հոդի զոհ տարւոց հետո, գրամ-

այն և պահանջնեցին թաղավորին հրաժարվել զահից: Թաղավորի
դիմեց ժողովի ողնության, վորու ապառամբ ժողովրդի պահանջ-
մամբ վրկել թաղավորին իշխանությունից և մշտեց ընտրություն
նոր սիստեմ, վարով ամեն մի քաղաքացի իրավունք ունի ընտրու-
թյանը մասնակցել:

Կոնվենտ, ֆիրմանդիաների և Յակոբինների պայքարը: — Հրամի-
վեց նոր ժողով, վոր Կոնվենտ անունն սուացավ: Այստեղ աչքի յիշ-
րակում յերկու խոշոր, իրար հակառակորդ խմբակցությունները,
Նին մեզ ծանոթ խոշոր տուարականների և արդյունաբերողների
կուսակցությունը՝ ֆիրմանդիաները և 2-րդ մանր-բորժուազիայի
և քաղաքացին չքաղաքության ներկայացուցիչները՝ Յակոբինները:
Պայքարն այս յերկու կուսակցությունների մեջ զնալով ավելի սրբ-
վում եր:

Ժիրոնդիաները վախենալով ժողովրդական ավելի վճռական
մարտերից, ամեն կերպ աշխատում էին թաղավորական իշխա-
նության ազգեցությունը, գետես սրաշտպանել: Յական Յակոբիննե-
ների ուժեղ դիմադրության շնորհիվ, թաղավորը, վորովիս հեղափո-
խության դաշտան, յենթարկվեց մահապատճի և դիմատվեց:

Թաղավորի մահապատճի սարսափ պատճառեց Յեղրուպական
միապետություններին: Նրանք յերկուու եյին կրուց սեփա-
կան յերկրի տապալումից: Ամեն կողմից հականեղափոխական ու-
ժերը պատրաստվում եյին ողակերու և խեղզելու դեռևս մանուկ
հանրապետությունը, Ֆրանսիայի թշնամինների թիվն որբասոր
ածում եր: Պատերազմի վտանգն ավելի սպասնալից եր դառնում
զա առանձնապես զգալի յեր Փարիզի ազգաբնակության համար,
քանի վոր չարանակվող պատերազմի շնորհիվ, յերկրում տեսնեա-
կան որությունն ել ավելի դժվարացել եր: Արտաքին առևտությ
ուլորովին դադարել եր, յերկրում արտադրությունը կրծատվել,
հազարավոր գործադրուրկներ թափառում եյին փողոցում, կեն-
սամթերքների գինն քնչպես Փարիզում, նույնական և գավառներում
հարյուրազատիկ թանգացել եր, թղթադրումների կուրսը մի քա-
նի տասնյակ անգամ ընկել: Այս հոդի վրա ժողովրդական անկար-
գություններն ու խոռվությունները սովորական յերեւոյթ եյին զար-
ձել Փարիզում: Բանվորներն ու չքաղաքացիները պահանջում եյին կեն-
սամթերքների սպակվել սահմանել, ազատվելու համար ավելիու-
յանունների չափաշահություններից: Կոնվենտ ժողովում փոթորկավից նիս-
տեր եյին տեղի ունենում, վարու Յակոբինները պահանջում էին,
վնասական միջնորդներ ձեռք տանել զարս հանելու յերկիրը անտեսա-
կան և պատերազմական ծանր կացությունից: Ժիրոնդիաները

Եմ եցին արյու պահանջներին և ցանկանում եցին ամեն իշխող կասե-
ռակ հզարամասին նոր թափը :

Յակոբինների հաղթահակը .—Այդ ժամանակ վրա հաստի ժողովրդական մի նոր ապրանքաբառ էլլյուսին, վրա կազմակերպել Այն արխիպէ հեղափոխկան մասնաները Մարտափ գլխավորությամբ:

Ապատոմք ժողովաւրդը զինված ուժերով, հարձակվեց կոն-
ֆենտի վրա և բռնի ուժով սպաստագրեց հեռացնել իշխանությունից
Ֆեռոնդիստներին: Յերկրի իշխանությունն անցավ Յակոբինների
մէռքը, վերջիններս, վորպես մանր բռուժուազիացին ներկայացու-
թիչներ, հենվում ելին նաև քաղաքի չքավորության և քանվորու-
թյան վրա:

Յերկրում զբությունը զնալով ավելի սպառնալից էր գտնում, Հականեղակիսությունն ամենուրեք զյուք էր բարձրացնում, դեպարտամենտից անյանդհատ լուրենք մյուն սատցվում, իրենին լող կտուլությունների մասն, մոռ առողջած էր Փարբեսի դեմ:

Պատերազմը շարունակվում էր, իսկ առվարդ զնալով, սաստկանում էր (Հակածեղափոխականների գրքումամբ Փարլիզում սպանվեց Յա-
կոբինյան ձախ թեմի առաջնորդ Մարտաւը): Անհրաժեշտ եր առ-
ողջ ուժերը լարել, վորպեսի փրկել հեղափոխությունը կործա-
ռումից: Յևլի իրոք, Յակոբինյան առաջնորդներ՝ Գանձուն, Խորեն-
չիկերը և ուրիշները, կարողացան ըմբռնել մոմենտի լրջությունը
և մեծ հեղափոխական հմտություն հայուարերել: Մշակվեց նոր
առաջնորդություն, վորփ հիման վրա, բայց 21 տարեկանից
արածր հաստի ունեցող քաղաքացիները, տանաց ունեցվածքի և
կայքի խարություն, կարող են ընտրելու և ընտրվելու իրավունք
առնելու:

Կազմվեց «Հեղափոխական կտուղարություն», վորք յերկեր բառավայրում եր, վարպես գիշատորք: Սակազդվեցին մի շաբք հետքոխական մարմիններ, որինակ՝ «հասարակության փրկության խմբելու», վորի նորադարձության և անինա պայքար մղել արտաքին և երքին հակառեղափոխական ուժերի դեմ: Կազմակերպվեց Հեղափոխական արիունառ, վորք վորոշումներն արտադ և վճռական բարպով իրազործում եր:

Ֆրանսիայի բոլոր տնկյուններն ուղարկվեցին կոմիտեյի հետևի աշխատակեցներ, ամենուրեք կազմակերպվեցին այսպես ուշված «ժողովրդական ընկերություններ», վարոնց նպատակն էր ազգերում կույել չափահարական ուժերի դեմ և պահպանել եղափոխության նվաճումները:

16 Տնորհիվ այլորթինակ կաղմակերպված աշխատանքի, Հնար-


զոր յեղամ, կարճ ժամանակաշրջանում, խոչսր շքչալարձ կառա-
բել, թշնամիներին քշել Թբիլիսիացի առևմաններից, ամբացնե-
րանակը և հիմնային ջախջախել ներքին հակառակավորական ու-
ժերը:

Յակովինների կառավարությունը ձեռնարկեց ներքին գրության բարեփախման, չպավստության պահանջի հիման վրա, նշանալիքներին կենամթերքների կողման պին: Գյուղացիների ունեցած պարտավորությունները հանդիպ կարգած առանքերի, բարբար չեղալ համարինք: Գյուղացիները փորոշ քաղաքական իրավունքներ ստացան: Այսուամենայնիվ այս ձեռնարկումները, յնքերի ներքում գոյացնելուն ունեցող լարգած գրությունը չվերացրին: Նախ սահագների նշանակումը հաջող արդյունք չափեց, պորովհանեսը սպեկուլացիան շարունակվում էր և մթիքքները ծախում են: Կազմակերպությունի և թշնագ գներով: Սակայն նշանակիցն նաև բանվարական ուժի վարձելու վերաբերյալ, վարը շատ ցածր էր և փոքրչույթ չեւ կարող բավարարել բանվորներին և արհեստագործներին: Վերջիններս պահանջում եյին ամենի վճռական միջոցներ և սփականառություն:

Սակայն Յակոբինները լինելով մահր-բութուազիացի շահերի արտահայտիչ, չեցին կարող վուչ մի կերպ թույլ տալ սեփականություն իրավունքի խախտում։ Յակոբինները մահվան պատիժ սահմանեցին, սեփականության իրավունքի խախտման դեպքում։ Եյալիսով քաղաքի չունեվորների և ներգարինյան իշխանություն հարաբերությունները, ամելի թշնամական դարձան։

Գործը բավ չեր նաև գյուղում։ Յակոբինների ձեռքում կուտակվում եր հողի խոշոր քանակություն։ Յեկեղեցիներից զբաժած հողերն ընկան գյուղի ունեվորների ձեռքը։ Գետաթյունը պատերազմական ծախքերը ծածկելու համար, հաճախ վաճառքի յեր հանում պետական հողեր, վոր զնում ելին զյուղի ունեվորներն և քաղաքի բուրժուազիան։ Այսպես, գյուղի չքափորությունը առից հողագործկ մնաց, զժողուական բակալինից։

Պայքար Յակոբիների շարքերում .—Մըս հետ միասին Յա-
կոբինների շարքերում միասնություն գոյաւթյան չտներ : Այն-
ով ժամար բուրժուազիայի կուսակցություն, իր սոցիալական աճ-
բողջաւթյամբ նա միասնական չեր : Այսպէս որինակ՝ Յակոբին-
ների այն մասը, վոր ամելի քիչ ունեֆօրներ ենին, պահանջում
եյին ավելացնել հարաւաների հարկերը և տյդպիսով միջացնել
հայթայթել գործադուրիներին և բամբարներին բաժարարելու հո-



Տար: Այս խմբակցության ստացնորդներն ենին Հեքերը և Շամիլը: Մրանց գեմ պայքարը եցին մզում մասր բուրժուազիայի ավելի ունելոր մասի ներկայացուցիչները՝ Դանառնը և Խոշեսպիերը: Այս պայքարում հաղթող հանդիսացան Դանառնը և Խորհուազիերը: Հերերականներին զատապարաւեցին մահապատճի: Սակայն որպատճի գործը չվերջացավ: Այս անգամ պայքարը շարունակվեց Դանառնի և Խորհուազիերի մեջ: Առաջինը պահանջում էր վերջ տալ տեր բորին և հեղափոխությունը վերջացած համարել, իսկ Խորհուազիերը դեմ դուրս յեկավ այդ քաղաքականաւթյանը: Դանառնի կողմանիցները պարագեցին և զատապարաւեցին զիստման դիրտոնի վրա:

ՅԱԿՈԲԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Այսպիսով Կոնվենում իշխանությունը մնաց Յակոբինների մի ժողով խմբակի ձեռքում՝ Խորհուազիերի գլխաւորությամբ: Յերազը և Հարածանքը հակառակափոխ բոլոր տարրերի դեմ չարաշտկվում եր: Յերկում թշնամանքն անում եր տիրող կարդերի գեմ: Հասարակության այն մասը, որը հեղափոխության ընթացքում, բավականաշափ ունացել և ամրացել եր, պահանջում եր վերջ տալ բոնություններին և տերորին, ապհովել խաղաղ ունակության կյանքը, իսկ չքավարենք ու բանվորները բավարարություն շատանալով, վոչ մի համակրանք չենին տաճում հանդիւղ Թուրքակինների իշխանության: Վերջինս կորցրել եր իր վասրի տակի հոգը:

Խորհուազիերի անկումն անխուսափելի յեր: Անշար բուրժուազիայի շուրջ համախմբվել ենին Խորհուազիերից պարտված զանազան խմբի մնացորդները և 1794 թ. Հունիսի 27-ին (Տերմիգորի 9-ին) և Փրանսիական տօմարավ) դատեցին Խորհուազիերին և զատապարաւեցին մահվան:

Մրանով վերջանում և բուրժուազիայի ալիրապետությունը Ֆրանսիայում և կրկին իշխանության գլուխ և անցնում խոչոր բուրժուազիան:

Կոնվենա վերադարձն Ժիրոնդիաների վողջ մնացած անդամները: Յակոբինների մշտկած որևէնքների մեծ մասը վերացվեց: Քաղաքական կյանքին մտահակցելու իրավունքը կրկին վերապահվեց և փականատերերին: Խոստ Հարածանքի յինթարկվեցին Յակոբինների դեկանը դարձելու:

Յեղակացության: — Այսպիսով Փրանսիական մեծ հեղափո-

խությունն ըստ եյության բուրժուազիան եր, նա հիմնովին վերափոխեց Ֆրանսիայի անտեսական և քաղաքական կյանքը, այդպիսով հարավալորություն արվեց առեվտա-արդյունաբերական կապահպակմին, արագ կերպով զարգանալու:

Բուրժուազիայի կողմից վերափական և քաղաքական նոր դրաբարերություններ, վերացվեցին Փիոդալական իրավունքները և աղնվականների արտոնությունները:

Հետագայում Նապալմոն Բոնապարտի ձեռքով կազմվեց քաղաքագիական և քրեական նոր որենսդիրք, վոր ամբողջապես արտացոլում եր բուրժուազիայի շահերը և ապահովում եր կապիսալվմի զարգացումը:

Զնայած բանվոր դասակարգը և գյուղի չունեվոր մասսաները հեղափոխական պայքարի առաջակարգ շարքերությունները, նըրանց անմիջական ուղուած չումին: Միայն բուրժուազիան, այսպես կոչված, դեմոկրատական կարգերը, վոր Փիոդալականի համեմատությամբ ավելի առաջակամական եյն, ճնարուվորություն ընձեռնեցին պրոլետարիատին, վորպես ինքնուրույն դասակարգ, կազմակերպվել և պայքարել, հետագա սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար:

ՍՈՒԻԳՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ եր ներկայացնում իրենից որենսդիր ժողովը և ի՞նչ փափառություն մտցրեց հեղափոխության ընթացքի մեջ:

2. Ի՞նչո՞ւ քաղաքի և գյուղի չունեվոր մասսաների դժուհությունն հետպհետե անում եր:

3. Ի՞նչ ազգեցություն ունեցավ պատերազմը և ի՞նչ Հույսեր եյին կապել ուրա հետ թաղավորն ու ազնվականությունը:

4. Ի՞նչ կարգեր հաստատվեցին ոգոսուսի 10-ի հեղաշըրաժումից հետո:

5. Ի՞նչ հիմնական խմբակցություններ զոյտություն ուներ կոնվենուատում:

6. Բացարեցեք ինչպե՞ս Յակոբիններն անցան իշխանության դըմուի:

7. Ի՞նչո՞վ ընդառաջեցին Յակոբինները քաղաքի և գյուղի չունեվորների պահանջին:

8. Ի՞նչ խմբակներ կազին Յակոբինների շարքերում:

9. Ինչո՞վ և բացարձաւմ Յակովինյան դիկտատորայի անհոգը:

10. Տերմիդոսի 9-ր և վերջնիս պատճառները:

11. Ինչո՞վ արտահայտեց խոշոր քարժուազիայի իշխանության վերահաստատումը:

ՆՅՈՒԹԵՐԻ ԻՆՔՆԱԽԻՐՈՒՅՆՆ ՍՇԽԱՏՄՆՔԻ ՀԱՄԱՐ

I Թեմա— Ֆիոդալական կարգերը խանդարում ենին յերկրության սահմանական գարգացմանը: Ֆրանսոֆայի ներում դոյտիքյուն ունեցող մաքսային կանոնները դժվարացնում ենին առեվտարն ու փոխանակությունը: Համբարային կանոնները կասեցնում ենին արտօգրության աճումը:

Այս թեման մշակելու և գրավոր աշխատանք կատարելու համար կարգացեք հետեւյալ նյութը 181 յերես.—

ՏՐԻՒԱ ՔԱՂԱՔԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԲԱՀԱՆԳԻՑ

«Վորպեսպի բոլոր մաքսաները փոխադրվեն սահմանների մոտ, պերաժներն^{*)} ու պետական գանձարանի իրավունքները, վերացվեն առանց բացառության: Այդ արդելքները, փորոնց հանդիպում և առկիտուրն ամեն քայլափոխում, և առեվտարականների կրած ճնշումները, կարծես մի թշնամի յերկրում, դրկում են նրան այն թանգարին ազատությունից, վարն ստեղծում են նրա հարստությունը, նրա ուժը:»

«Վորպեսպի վերացվեն առեւտրի բացառիկ իրավունքի վերարկյալ բոլոր արտօնությունները: Դրանք խանդարում են մրցակցությանը և արհեստական կերպով՝ այնպիսի հաջողություններ ստեղծում, փորոնց աեղի պիտի ունենան միայն նորմիկ տնհամական դրամների...»

«Վորպետի վերացվեն մանուքակառուրանների^{**)} խառնությունները, ի նկատի ունենալով նրանց անողությ լինելը, ինկ նրանց պարտականությունները հանձնվեն առեվտրական դասի կողմից ընտրվոծ 2 վաճառականի, վարոնք անմիջական ծոնոթություն են ունենալու արտադրություն վարելու գործին:

^{*)} Այսպես եյին կոչվում այն հասուն տուքերը, վար դանձվում եյին ապրանքները ճանապարհներով, կամուրջներով, գետերով և այլն տեղափոխելու համար:

^{**)} Տեսաւչչինովիկիներ, վարոնք հետեւյամ եյին ապրանքները պատրաստելու կարգ ու կանոնի կիրառմանը:

«Վորպետի վորևէ ապրանքի ամեն մի հատն այևս կնքման (պլոմբիրովիկայի) յենթակա չլինի, այլ նշանակված լինեն միայն չափերը կամ իրերի թիվը յուրաքանչյուր հատի գլխին, և կրեն գործարանատիրոջ և առեվտրականի անվանական կնիքը:

«Վորպետի առեվտրականների այրի կանայք իրենց այրիության ժամանակ կարողանան շարունակել առեւտուրը, առանց պարագաները վճար տալու համբարության մեջ ընդունվելու համար:

«Վորպետի վոչ մի գյուղական ճեռնարկատիրոջ չանհանգտացնեն իր գործվածքները վաճառելու համար, քանի վոր առատությունը արգյունաբերության բարդավաճման աղբյուրն է:

«Վորպետի կշռի և չափի մի ընդհանուր միավոր սահմանվի ամբողջ պետության համար:

II Թեմա—Հեղափոխության ընթացքում բուրժուազիան հետեւ վողական չեր, հենվելով միավետական ուժերի վրա, նա պայքարում եր հեղափոխական մասաների վճռական յելոյթների դեմ, հրատարակելով հատուկ որենքներ բանվորների և արհեստագորների միությունների վերաբերյալ:

Այս թեման մշակելու և գրավոր աշխատանք կատարելու համար կարգացեք հետեւյալ նյութը 191 յերես.—

«ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԻՅԵՎՆՈՒՅՆ ԱՐՃԵՍՏԻ ՏԵՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՃԵՍՏԱՎՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐ ՅԱԼ ՈՐԵՆՔ»

«Հոդ. II. Միենույն կարողության և միենույն արհեստի տեր քաղաքացիները, ճեռնարկատերերը, խանութպանները և այս կամ այն արհեստի բանվորներն ու քարդահներն իրավունք չունեն միասին հավաքելով նախազահ ու քարտուղար ընտրել, ինչպես նաև արձանադրություններ կազմել, վճիռներ ու վորոշումներ կայացնել, ուղղամենու^{*)} կազմել իրենց, այսպես կոչված, ընդհանուր շահերի վերաբերմամբ:

«Հոդ. III Մունիցիպալալ^{**)} վարչական մարմիններին թույլ չի տրվում ինդիքներ, դիմումներ և ուղերձներ ընդունել վորեւ արհեստի կողմից, ինչպես և պատասխանել նրա դիմումներին: Այդ մարմիններին հրամայվում ե անվավեր հայտարարել այն վորոշումները, վորոնք կարող եյին կայացվել այդ ձեվով և ինսա

^{*)} Կանոնադրություն:

^{**)} Քաղաքային:

կերպով հետեւել, վոր նման ինդիբները մնան անհետեվանք, այսինքն չիրագործվեն:

«Հոդ. IV Յեթե, հակառակ ազատության սկզբունքների և սահմանադրության, միմյանց հետ ընդհանուր պրոֆեսիայով կամ արհետով կապված քաղաքացիները վորոշումներ էկայացնեն կամ համաձայնություններ կլասին, վորախաղի միասին հրաժարվեն աշխատելուց կամ միասին իրենց արհետի համապատասխան աշխատանք վերցնեն միմիայն վորոշ դնով,—ապա այդպիսի վը ճիռներն ու վորոշումները, անկախ այն հանդամանքից, թե նըր ընք յերդումով են տեղի ունեցել թե վոչ, հայտարարվում են սահմանադրության հակառակ, աշխատության և մարդու են անվարքոր: Վարչական և ժունիցիպալ մարմինները պարտավոր են հայտարարել այդպիսի վճիռների ու վորոշումների անվավերականության մասին:

«V. Այդպիսի վորոշումների պատճառ հանդիսացողները, պարագումներն ու գրդապատճառները, այլև նախագահի դեր կատարողները և նման վորոշումների խմբագրողները, դատախազի հայտարարության հիման վրա, հանձնվում են վոստիկանական դատի և դատապարտվում յուրաքանչյուրը 500 լիվր տուքանքի և մի տարով զրկվում են ակտիվ քաղաքացիների *) իրավունքներից:

«VI. Յեթե վերսկիշրու վորոշումներն ու համաձայնությունները, վոր կարածվեն իրեն հայտարարություն պատերին փակցնելով կամ ցըելով, սպառնալիք կպարունակեն ձեռնարկատերերի, արհետավորների, բանկորների և ուրիշ քաղաքից տվյալ վայրն յեկած որպարձով աշխատողների դեմ և կամ նրանց դեմ, ովքեր կրավականանան ալելի ցածր աշխատավարձով —ապա բոլոր պատճառ հանդիսացողները, խոռվարանները, դրդոիչները, այլ և նման արձանագրություններ և վայերագրեր ստորագրող բոլոր անձինք դատապարտվում են 1000 լիվր տուքանքի և յեռամայա բանտարկության:



*) Ակտիվ քաղաքացիներ կոչվում են նրանք, ովքեր համաձայն սահմանադրության ընտրական իրավունքներ ունեն:



